Պատմություն և մշակույթ 2024 № 21 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.1.268

Analysis of Palaeoanthropology of the Sevan Basin of the Middle and Late Bronze Ages Due to the Scientific Works of the Last Century

Ruzan Mkrtchyan
https://orcid.org/0000-0003-2809-5972
YSU Faculty of History, Chair of Culturology, Associate Professor
ruzantrop55@gmail.com

Keywords: Sevan Basin, craniological collection, Bronze Age, craniological measurements, frontal skeleton height, nasal bone profiliation.

Archaeological bio-artifacts serve as an important historical source for the reconstruction of heritological issues. The similarities and differences of the averaged metric data-based craniological descriptions used to be interpreted in terms of genetic proximity and distance. This approach rooted in Soviet and Armenian anthropology endured over time. The overarching conclusion is the classification of the Bronze Age population of Armenia within the southern European race, yet discord arises in the delineation of specific anthropological traits.

The anthropology of the Middle and Late Bronze Age population of the Sevan Basin has the following characteristics: maximal high face, profiliation of nasal bones and maximal vault of calvarium. These features differentiate the populace of Gegharkunik from the archaeoanthropological findings not only in Central Asia and the broader Caucasus region, but also from other areas within the Armenian Highlands. The ethnic history of the ancient societies can be reliably reconstructed only if the bio-artifacts under study undergo accurate and detailed historical and social documentation.

Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան հնամարդաբանության վերլուծություն՝ ըստ անցած դարի գիտական աշխատությունների

Ռուզան Մկրտչյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, մշակութաբանության ամբիոն, դոցենտ

Հիմնաբառեր՝ Սևանի ավազան, գանգաբանական հավաքածու, բրոնզի դար, գանգաչափական տվյալներ, դիմային կմախքի բարձրություն, քթոսկրերի խիստ պրոֆիլավորվածություն:

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 268-276

Received: 09.06.2024
Revised: 15.07.2024
Accepted: 31.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Հնագիտական կենսափաստը պատմական կարևոր սկզբնաղբյուր է ժառանգաբանական հիմնահարցերի վերակազմության պարագայում: Չափագրական տվյալների հիման վրա միջինացված գանգաբանական նկարագրերի նմանությունը մեկնաբանվել է ժառանգաբանական մոտիկության, իսկ տարբերակվածությունը՝ հեռավորության հիման վրա: Այս մոտեցումը երկար ժամանակ պահպանվել է խորհրդային հնամարդաբանության ոլորտում: Միակ ընդհանուր եզրակացությունն այն է, որ Հայաստանի բրոնզեդարյան բնակչությունը պատկանել է հարավային եվրոպեոիդ ռասային: Մարդաբանական տիպերի բնութագրություններում կա տարակարծություն: Սևանի ավազանի միջին և ուշբրոնզեդարյան բնակչության մարդաբանությունը ունի հետևյալ առանձնահատկությունները՝ առավելագույն երկարադիմություն, քթի պրոֆիլավորվածություն ու գանգասկավառակի չափազանց մեծ ծավալ: Այս հատկանիշները տարբերակում են Գեղարքունիքի բնակիչներին ոչ միայն Առաջավոր Ասիայի ու Կովկասի, այլ նաև Հայկական Լեռնաշխարհի այլ տարածքներից հայտնաբերված հնամարդաբանական նյութերից: Հին հանրությունների էթնիկական պատմությունը հավաստի կարելի է վերակազմել միայն այն պարագայում, եթե ուսումնասիրվող կենսափաստերը ունենան պատմամշակութային ստույգ ու մանրամասն անձնագրավորում:

Анализ палеоантропологии Севанского бассейна среднего и позднего бронзового периода по научным трудам прошлого века

Рузан Мкртчян
Исторический факультет ЕГУ, кафедра культурологии, доцент

Ключевые слова: Севанский бассейн, краниологическая коллекция, Бронзовый век, краниометрические данные, высота лобного скелета, профилирование носовых костей.

Археологические биофакты служат важным историческим источником для реконструкции вопросов наследственности. Сходства и различия краниологических описаний, основанных на усредненных метрических данных, раньше интерпретировались с точек зрения генетической близости и дальности. Этот подход, принятый в советской и армянской антропологии, сохранялся долгое время. Общим выводом является то, что популяция Армении бронзового века относится к южноевропеоидной расе. Что касается конкретных антропологических черт, то здесь имеются разногласия.

Антропология населения Средней и поздней бронзы Севанского бассейна имеет следующие характеристики: максимально высокое лицо, профилированность носовых костей и максимальный объем черепа. Эти особенности отличают население Гегаркуника от археоантропологических находок не только в Центральной Азии и Кавказском регионе, но и в других районах Армянского нагорья. Этническая история древних сообществ может быть достоверно реконструирована только при условии точного и детального историко-социального документирования изучаемых биофактов.

* * *

Ներածություն: Սևանի ավազանի բրոնզ-երկաթեդարյան դամբարաններից հավաքագրված հնամարդաբանական նյութերը բազմիցս մեկնաբանվել են էթնոժառանգաբանական համատեքստում և ունեն շուրջ 100-ամյա պատմություն: Հոդվածում առաջին անգամ մեկնաբանվում են անցած դարի բոլոր այն հեղինակների աշխատանքները, որոնք ուսումնասիրել են Գեղարքունիքի բրոնզեդարյան բնակչության մարդաբանությունը՝ համաձայն գանգաբանական տվյալների: Այս հոդվածի գիտական նորույթը հնամարդաբանական՝ չափագրական ու հնագիտական ուսումնասիրությունների համատեղ մեկնությունների ներկայացումն է: Այն արդիական է այնքանով, որ անդրադառնում է այնպիսի մի կարևոր պատմական հիմնահարցի լուսաբանման հնարավորություններին, ինչպիսին հայ ժողովրդի էթնոգենեզն է: Նշենք, որ դամբարանային համալիրներից հայտնաբերված կենսափաստերը (հնամարդաբանական նյութեր) անցած դարի խորհրդային մարդաբանական դպրոցի ներկայացուցիչների կողմից համարվում էին էթնոժառանագաբանական հարցերի պարզաբանման կարևոր սկզբնաղբյուր: Կարևորում ենք այդ կենսափաստերի վերակազմողական հնարավորություններընն այն դեպքում, երբ ուսումնասիրվող նյութը տիպաբանված, քարտեզագրված և վիճակագրորեն վերլուծված է ստույգ պատմամշակութային համատեքստում: Հակառակ դեպքում էթնիկական պատմության վերակազմությունը աղավաղվում է: Աշխատանքում կարևորում ենք գանգաբանական հավաքածուների անձնագրավորման, մշակութային պատկանելիության ստուգաբանությունը:

Սևանի ավազանի դամբարաններից Ե. Լալայանի հավաքագրած գանգաբանական նյութերի հավաքածուն

Հայաստանի հնամարդաբանական բնույթի ուսումնասիրությունների պատմությունը սկսվում է 1929 թ., երբ Վ. Վ. Բունակը հրատարակեց Սևանի ավազանի բրոնզ-երկաթեդարյան դամբարաններից Ե. Լալայանի կողմից հավաքագրված գանգաբանական նյութերը: Դրանց ընդհանուր երկարակերպությունը հիմք տվեց հեղինակին «մոտեցնելու Սևանի գանգերը հյուսիսային և ոչ թե միջերկրածովյան տիպերին» [Бунак, 1929, 75]:

Երկար մի ժամանակահատված խորհրդային հնամարդաբանական ուսումնասիրություններում այս հավաքածուն տեղայնացվում էր Սևանի հարավարևելյան ափամերձ հատվածում և թվագրվում էր երկաթի պարբերաշրջանով: Վ. Բունակի հրատարակած գանգերը թվով 37-ն են, որոնցից 24-ը արական են, իսկ 13-ը՝ իգական: Գանգերի մի մասը ժամանակին՝ Ե. Լալայանի տնօրինության օրոք, տեղափոխվել է Հայաստանի պատմության պետական թանգարան, այնուհետև՝ անհայտ կորել: Նյութերի մյուս մասը մնացել է Թիֆլիսի Կովկասյան թանգարանում [Լալայան, 1931, 219] և 1982 թ. հրատարակվել Մ. Աբդուշելիշվիլու կողմից [Абдушелишвили, 1982, 128, 131]: Հեղինակը հավանաբար օգտագործել է Վ. Բունակի հրատարակած գանգերի անհատական տվյալները և համալրել վերջիններս Վրաստանում մնացած մյուս գանգերի չափագրական տվյալներով, որի արդյունքում նրա ներկայացրած ժողովածուն կազմել է 42 արական և 23 իգական գանգ: Մ. Աբդուշելիշվիլին չի շեշտում, որ այդ նյութը կոնկրետ Սևանի ավազանի հարավարևելյան ափերից է, վերացական կերպով

հիշատակում է միայն Սևանի ավազանի տարածքը և նյութը թվագրում բրոնզից երկաթի պարբերաշրջանին անցման ժամանակահատվածով [Абдушелишвили, 1982, 128]: Համեմատական համատեքստում ներկայացնելով ու քննարկելով Վրաստանի և ողջ Անդրկովկասի բրոնզեդարյան հնամարդաբանական ժողովածուները՝ նա նշում է, որ նշված տարածաշրջանից հայտնաբերված գանգաբանական ժողովածուների նկարագրերի միջև էական տարբերություններ չկան, և բոլորն էլ պատկանում են մեկ ընդհանուր՝ միջերկրյածովյան մարդաբանական տիպին: Դրանք բնութագրվում են ընդգծված ծայրահեղ երկարագանգությամբ, գանգասկավառակի բարձրության մեծ չափերով, դեմքի միջին լայնությամբ, դեմքի հորիզոնական սուր անկյուններով և քթոսկրերի խիստ պրոֆիլավորվածությամբ [Абдушелишвили, 1982, 66-67]:

Օգտվելով Երվանդ Լալայանի օրագրից, 1931 թ. հրատարակված նրա մենագրությունից և հետագայում հրատարակված պեղումների արդյունքների տվյալներից,՝հնարավոր եղավ պարզել, որ որոշ գանգեր թվագրվում են, ոչ թե երկաթի, այլ բրոնզի դարով: Խոսքը կոնկրետ վերաբերում է Ներքին Ադիամանի (ներկայիս՝ Ներքին Գետաշեն) № 17 դամբարանի գանգաբանական նյութին (Վ. Բունակի մոտ ներկայացված են 581, 583, 584 և 585 համարների ներքո), որը, ըստ հնագիտական ուղեկցող արտափաստերի՝ հնագետներ Պ. Ավետիսյանը և Ա. Փիլիպոսյանը վերաթվագրեցին ուշ բրոնզի շրջափուլով (մ.թ.ա. 15-14-րդ դդ.) [Ավետիսյան, Փիլիպոսյան, 1996, 3]:

Լճաշենի հնամարդաբանական հավաքածուն

Հայաստանի հնամարդաբանությանը վերաբերող մեծ համահավաք աշխատանք իրականացրեց Վ. Պ. Ալեքսեևն իր Կովկասի ժողովուրդների ծագումնաբանությանը նվիրված հիմնարար մենագրության մեջ: Նա մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի՝ Լճաշենի, Ցամաքաբերդի և Սևան քաղաքի դամբարաններից հայտնաբերված գանգերը (Վ. Ալեքսեևի կողմից հրատարակված, Հայաստանի տարածքից հայտնաբերված գանգաբանական հավաքածուների ցուցակը ավելի մեծ է [Алексеев, 1974]) չափագրեց Հայաստանի պատմության պետական թանգարանի ու Կամոյի գավառագիտական թանգարանի ֆոնդերում:

Լճաշենի հնամարդաբանական հավաքածուն հավաքագրվել է 1956 թվականից մինչև 2018 թվականը: Թվաքանակով այն Անդրկովկասի ամենաներկայացուցչական ժողովածուն է, որը, հնամարդաբանական նյութի աճին զուգընթաց, բազմիցս հրատարակվել է Հ. Ազիզյանի, Ռ. Բուբուշյանի, Վ. Ալեքսեևի, ապա՝ Ռ. Մկրտչյանի կողմից: XX դարի երկրորդ կեսի խորհրդային դպրոցի գանգաբանական ուսումնասիրություններն ավարտվում էին էթնոժառանգաբանական համարձակ եզրահանգումներով: Նույնը վերաբերում է հայրենական նյութերի վրա իրագործված աշխատանքներին: Ռուսական ու խորհրդային դպրոցի մարդաբանները չափագրական և միջինացված տվյալների նմանություններն ու տարբերությունները մեկնաբանում էին ծագումնաբանական համատեքստում: Այդ հրապույրից զերծ չմնացին Հ. Ազիզյանի, Ռ. Բուբուշյանի, Վ. Ալեքսեևի վերլուծականները՝ նվիրված Լճաշենի դամբարանադաշտի ներկայացուցչական գանգաբանական ժողովածուին:

Այս հավաքածուի առաջին հրատարակությունը պատկանում է Հ. Ազիզյանին: Հեղինակը նշում է, որ իր կողմից ուսումնասիրվել է 14 գանգ [Азизян, 1965, 307]: Քննական աշխատանքներից հետո պարզվեց, որ այդ գանգերը և ևս 4-ը նրա իսկ կողմից հանձնվել են Մոսկվայի պետական համալսարանի մարդաբանության թանգարանին և գրանցված են AVII 10966-10983 համարների ներքո [Алексеева, Эренбург, 1979, 33]: Հետաքրքրական է, որ գանգերի վրա կա նաև Հայաստանի

պատմության թանգարանի հաշվառանիշը, որը Հ. Ազիզյանի ուսումնասիրած և հոդվածում ներկայացված գանգերի տվյալների հետ միանգամայն նույնական է [Азизян, 1965, 308]: Հեղինակն իր հոդվածում ներկայացրել է այդ 14 գանգերի չափագրական անհատական տվյալները 1956 թ. պեղված 17 գանգերի համարժեք տվյալներին զուգահեռ: Դրանք զուրկ են միջինացված ցուցանիշներից: Հենվելով հատկանիշների տատանման նվազագույն ու առավելագույն արժեքների երբեմն միջինացված ցուցանիշների վրա՝ Հ. Ազիզյանը ռասայական բնորոշումներ է կատարում՝ դասակարգելով Լճաշենի այս 33 գանգերը հյուսիսեվրոպեոիդ ու միջերկրյածովյան տիպերի համակարգում: Այս ամենի արդյունքում նա փորձում է Վ. Բունակի խոսքերով հիմնավորել, որ Սևանի ավազանի գանգերը կրում են Առաջավոր Ասիայի հնագույն երկարագանգերի հատկանիշները: Այսպիսով՝ ստացվում է երեք ռասայական բնութագրում Լճաշենի առաջին գանգաբանական հավաքածուի վերաբերյալ [Бубушян, 1973, 25]:

Հ. Մնացականյանի կողմից պեղված ժողովածուն հիմք հանդիսացավ Ռ. Բուբուշյանի թեկնածուական թեզի համար, որում ներկայացված են 85 անհատների գանգաչափական տվյալներ՝ իրենց միջինացված ցուցանիշներով: Ռ. Բուբուշյանը նույնպես չշրջանցեց էթնոժառանգաբանական բնույթի վերակազմությունները: Նա Լճաշենի միջին ու ուշբրոնզեդարյան բնակչության մարդաբանական տիպի ծագումնաբանությունը տեսավ նախորդող՝ վաղբրոնզեդարյան (շենգավիթյան) գանգաբանական նյութերում: Ապա Սևանի ավազանի բրոնզ-երկաթեդարյան բնակչության ծագումնաբանական գործընթացը ձևակերպեց հետևյալ կերպ. «Ի դեմս Սևանի ավազանի այն բնակիչների, որոնք թողել են Լճաշենի, Սևանի, Ցամաքաբերդի և Նորդուզի դամբարանները, մնում է տեսնել կովկասյան տիպի հնագույն ներկայացուցիչներին: Այս տիպը ձևավորվել է բարձրլեռնային մեկուսացված շրջաններում, որոնք Կովկասյան լեռնաշղթային հարել են ինչպես հարավից, այնպես էլ հյուսիսից: Սևանի ափերին նրա ներկայացուցիչները հայտնվեցին հյուսիսից կամ արևելքից, բայց դա Եվրասիական մայրցամաքից կամ նույնիսկ արևելաեվրոպական հարթավայրերից կատարված գաղթ չէր, այլ տեղական բնույթի վերաբնակեցում Կովկասի շրջանակներում» [Բուբուշյան, 1971, 236]: *Կովկասյան* եզրույթը նրա ռուսալեզու սեղմագրում ներկայացված է որպես կովկասիոնական [Бубушян, 1973, 22], որը գիտական շրջանառության մեջ էր մտցվել Մ. Աբդուշելիվիլու կողմից [Натишвили, Абдушелишвили, 1954, 24]: Վերջինս այս եզրույթի ներքո խմբավորել էր Հյուսիսային Կովկասի կենտրոնական ու արևելյան տարածքների էթնիկ հանրությունները: Իրականում այդ տարածաշրջանի հնամարդաբանական նյութերը չունեն այն առանձնահատուկ նկարագիրը (ընդհանուր զանգվածեղություն, լայնադիմություն), որը փորձում էր հիմնավորել Ռ. Բուբուշյանը, ուստի նրա առաջադրած «էթնիկական պատմությունը» ժամանակին հակադարձ ընթացք է ստանում, երբ ժամանակակից հյուսիսկովկասյան բնակչության մեջ (չեչեներ, իգնուշներ, դաղստանյան էթնիկ հանրություններ) փորձում է տեսնել Սևանի ավազանի բրոնզեդարյան բնակիչների նախնիներին: Հետաքրքրական են նաև հայաստանյան գանգաբանական նյութերի նրա համեմատականները Իրանի Սիալկ Բ երկաթեդարյան դամբարանադաշտի գանգերի հետ: Սրանք ևս ժամանակագրական առումով ավելի ուշ են, քան Լճաշենի, Ցամաքաբերդի ու Սևանի

դամբարանների գանգերը, սակայն երկարադիմության, չափավոր լայնադիմության և երկարագանգության բնութագրերում նմանությունն ակնհայտ է:

Լճաշենի՝ Ռ. Բուբուշյանի հրատարակած հավաքածուն միջինացված տվյալներով ու դիտարկումների քանակով նույնությամբ ներկայացված է Վ. Ալեքսեևի՝ Կովկասի ժողովուրդների ծագումնաբանությանը նվիրված աշխատության մեջ: Հեղինակը նշում է, որ այս նյութը ուսումնասիրված է եղել Հայաստանի պատմության պետական ու Մոսկվայի պետական համալսարանի մարդաբանության թանգարաններում: Պետք է ենթադրել, որ այս լճաշենյան 85գանգերի չափագրական աշխատանքները իրագործվել են և հրատարակվել Ռ. Բուբուշյանի կողմից: Վ. Ալեքսեևը, հենվելով իր իսկ կողմից առաջ քաշած շենգավիթյան գանգերի զանգվածեղ ու Ջրառատի նրբակազմ գանգաբանական երկկերպ տիպաբանության վրա, Լճաշենի հավաքածուն բնութագրում է որպես խոշոր, զանգվածեղ, երկարագանգ ընտրույթ ու այդ երկու ձևաբանությունների խառնածին արդյունք, որտեղ շենգավիթյան զանգվածեղ տարբերակը առավել արտահայտված է:

Ջրառատի երկու նրբակազմ գանգերի հետ լճաշենյան ներկայացուցչական հավաքածուն աղերսներ ունի դիմային կմախքի կառուցվածքով: Իսկ քթոսկրերի պրոֆիլավորվածության աստիճանով լճաշենյան գանգերը գերազանցում են շենգավիթյան ու Ջրառատի տարբերակները: Այս փաստի վրա հելնելով՝ Վ. Ալեքսեևը փոքր-ինչ նահանջում է իր իսկ առաջ քաշած ուղղագիծ «մետիսացիոն» դրույթից: Դիմային կմախքի օրթոգնատ կառուցվածքը հեղինակին թույլ է տալիս լճաշենյան հավաքածուն դիտարկել հարավային եվրոպեոիդների բնակության տիրույթներից դուրս կամ դրանց սահմանային գոտիներում և կրկին ձևակերպել դեռևս ժամանակին Վ. Բունակի կողմից առաջ քաշված հարցադրումը. «Լճաշենի բնակչության մարդաբանական առանձնահատկություններն արդյո՞ք ձևավորվել են հյուսիսային տիպերի ազդեցության շնորհիվ» [Алексеев, 1974, 88]:

Լճաշենի գանգաբանական հավաքածուն տասը տարի անց դարձյալ ներկայացվում է Վ. Ալեքսեևի ուև Ի. Գոխմանի ՍՍՀՄ ասիական տարածքների մարդաբանությանը նվիրված աշխատության մեջ, որի թվակազմը լրացվում է ևս 50 գանգով [Алексеев, Гохман, 1984, 17]: Այս անգամ հեղինակները բավարարվում են միայն հավաքածուի լայնադիմության նկարագրությամբ՝ այն ներկայացնելով որպես քննարկվող տարածքի բրոնզեդարյան բնակչության առանձնահատկություն ու զերծ մնալով լուրջ էթնոժառանգաբանական եզրահանգումներից [Алексеев, Гохман, 1984, 16]:

Վերոնշյալ հեղինակների հրատարակություններում Լճաշենի գանգաբանական հավաքածուն ներկայացված է որպես զարգացած բրոնզի դարաշրջանի ժողովածու: Հարկ է նշել, որ Լճաշենի դամբարանադաշտի ժամանակագրական կտրվածքը ընդգրկում է բրոնզի ժամանակաշրջանի երկու շրջափուլ, և այս մեծաքանակ ժողովածուն հնարավոր է ավելի հստակորեն փուլաբաժանել: Հնագիտական անձնագրավորման շնորհիվ Ա. Փիլիպոսյանի ու Պ. Ավետիսյանի օգնությամբ հնարավոր եղավ համադրել Հ. Մնացականյանի հավաքագրած գանգաբանական ընտրույթը հնագիտական նյութերի հետ և անհատապես թվագրել թանգարանում պահվող լճաշենյան յուրաքանչյուր գանգ: Հնագետները Լճաշենի գանգաբանական ժողովածուն բաժանեցին երկու հաջորդական՝ միջին բրոնզի շրջափուլի (մ.թ.ա. 18-16/15 դդ.) Սևան-արցախյան մշակույթին պատկանող և ուշ բրոնզի շրջափուլի (մ.թ.ա. 15-13 դդ.) Լճաշեն-

մեծամորյան մշակույթին պատկանող ժամանակագրական խմբերի: Վերջինս ևս տրոհվեց երկու՝ մ.թ.ա. 15-14 ու մ.թ.ա. 14-13 դարերը ներառող ենթախմբերի:

Հ. Մնացականյանի պեղած և ստույգ թվագրություն ստացած անհատական գանգաբանական դիտարկումներին գումարվեցին նույն դամբարանադաշտում հնագետ Լ. Պետրոսյանի պեղված կենսափաստերը, որոնք, իրենց թվագրություններին համապատասխան, կազմեցին Լճաշենի դամբարանադաշտի միջին ու ուշ բրոնզի շրջափուլերի ներկայացուցչական ժողովածուները: Սրանց միջինացված ցուցանիշները՝ որպես նոր հնամարդաբանական սկզբնաղբյուր, ներկայացվեցին Հոռոմի դամբարանադաշտի հնամարդաբանությանը նվիրված մենագրության մեջ [Мкртчян, 2001, 24-25]:

Այսօր Լճաշենի հնամարդաբանական հավաքածուն ամփոփած է Հայաստանի պատմության թանգարանի մարդաբանության պահոցում: Հ. Մնացականյանի պեղած գանգերը գրանցված են թիվ 2009, 2049, 2119, 2167, 2189, 2302, 2335, 2500-2506 հավաքածուների հաշվառանիշերի ներքո, իսկ Լ. Պետրոսյանի պեղված գանգերն ու կմախքները պահ են տրված թանգարանին և դեռևս սպասում են իրենց հաշվառմանը: Նյութերը, պահպանության ու անվտանգության արդի պահանջներին համապատասխան, փաթեթավորվել ու տեղադրվել են փայտից և ստվարաթղթից պատրաստված օրգանական արկղերում:

Իրականում չենք սխալվի, եթե արձանագրենք, որ այս հավաքածուն Կովկասյան տարածաշրջանի միջին և ուշբրոնզեդարյան շրջափուլերի ամենաներկայացուցչական հնամարդաբանական ընտրույթն է, որը ներառում է ոչ միայն գանգաբանական, այլև մեծ թվով ոսկրաբանական անհատական տվյալներ:

Ցամաքաբերդի դամբարանադաշտի գանգաբանական հավաքածուն

Հ. Մնացականյանի կողմից 1954 թ. պեղված Ցամաքաբերդի գանգաբանական հավաքածուն մասնագիտական գրականության մեջ հայտնի է որպես ուշբրոնզ-վաղերկաթեդարյան ընտրույթ: Այն առաջին անգամ հրատարակել է Վ. Ալեքսեևը՝ նշելով, որ գանգերն նախապես ուսումնասիրել է Վ. Տեր-Մարտիրոսյանն իր դիպլոմային աշխատանքի շրջանակում, ապա՝ արձանագրել, որ նյութերը պահվում են Մոսկվայի պետական համալսարանի մարդաբանության ամբիոնում:

Իր հայալեզու հոդվածում, ապա մենագրության մեջ Վ. Ալեքսեևն այս գանգերը բնութագրում է հիմնական տրամագծերի չափազանց մեծ չափերով և, մասնավորապես, զգալիորեն լայն դեմքով ու զանգվածեղությամբ, որը թույլ է տվել հեղինակին դրանք մերձեցնել եվրոպեոիդ ռասայի հնագույն լայնադեմ տարբերակին [Алексеев, 1964, 17-18]:

Ցամաքաբերդի գանգերի զանգվածեղությունն ու լայնադիմությունը Հայաստանի երկաթեդարյան համաժամանակյա առավել նրբակազմ ու փոքր տրամաչափեր ունեցող գանգաբանական ընտրույթների կողքին տարօրինակ են թվում: Այդ տարակուսանքը Վ. Ալեքսեևն արտահայտել է հետևյալ կերպ. «Դժվար է գտնել տրամաբանական բացատրություն այս երևույթին, և դժվար է ընտրել աղերսներ ժամանակի ընթացքում հատկանիշների նման թռիչքաձև փոփոխությունների համար: Հավանաբար Ցամաքաբերդի գանգերի չափազանց զանգվածեղությունը պատահական բնույթ ունի» [Алексеев, 1974, 98]:

Բարեբախտաբար, հրատարակելով Ցամաքաբերդի գանգերի անհատական տվյալները, Վ. Ալեքսեևը նշել է նաև դամբարանային համալիրների համարները, որոնց հնագիտական նյութերը պահվում են Հայաստանի պատմության թանգարանում (ՀՊԹ)։ Ուստի յուրաքանչյուր գանգը հնարավոր եղավ հնագիտորեն անձնագրավորել։ Քննական աշխատանքները իրագործեցին հնագետներ Ա. Փիլիպոսյանն ու Բ. Վարդանյանը։ Պարզվեց, որ Ցամաքաբերդի 10 գանգերը թվագրում են միջին բրոնզի երրորդ ավարտական փուլով (մ.թ.ա. 17-16/15 դդ.)։ ՀՊԹ գլխավոր գույքամատյանում հնագիտական իրերը ներառված են թիվ 1941/10094 հավաքածուում՝ 1-4 (I դամբարան), 5-10 (II դամբարան), 10ա-13 (III դամբարան), 13ա-15 (IV դամբարան), 15ա-21 (V դամբարան), 22ա-28 (VI դամբարան), 28ա-31 (VII դամբարան), 31ա-37 (VIII դամբարան), 38ա-41 (IX դամբարան), 42ա-63 (X դամբարան) համարների ներքո։ Հավաքածուում «ա» համարակալմամբ ներկայացված էին դամբարաններից պեղված գանգերը, պարզ չէր, թե ինչու չեն ցուցակագրվել առաջին երկու դամբարանների գանգերը, բայց դրանք ներառվել են Վ. Ալեքսեևի Ցամաքաբերդի ուսումնասիրված հնամարդաբանական նյութերի կազմում։ Ուստի Վ. Ալեքսեևի հարցադրման պատասխանը տրվեց Ցամաքաբերդի դամբարանային համալիրների վերաթվագրումից հետո։ Այսպիսով՝ ըստ հեղինակի չափագրությունների անհատական տվյալների՝ մենք ունենք Ցամաքաբերդի միջինբրոնզեդարյան մշակույթի կրողների մարդաբանական նկարագիրը՝ որպես մեծադեմ, երկարակերպ և խիստ պրոֆիլավորված հնահանրություն։ Ցամքաբերդի գանգերը КА № 108-117 հաշվառանիշի ներքո գրանցված են Մոսկվայի պետական համալսարանի մարդաբանության թանգարանի կատալոգում, ըստ որի՝ գանգերն իրոք 10-ն են, պեղվել են Հ. Մնացականյանի կողմից 1954 թ., սակայն հայտնաբերման վայրը նշված է «Սևանա լիճ» [Алексеева, Эренбург, 1979, 33]։ Պետք է ենթադրել, որ դրանք հենց Ցամաքաբերդի գանգերն են, որոնք, ցավոք, թանգարանի պահոցներից բացակայում են։

Եզրակացություններ։ Հայաստանի Հանրապետության տարածքից հայտնաբերված միջին և ուշբրոնզեդարյան գանգաբանական հավաքածուների վերլուծականը մինչ վիճակագրական մեթոդների կիրառումը կարող է տալ միայն մեկ պատասխան. Հայաստանի միջին ու ուշբրոնզեդարյան հնահանրությունները պատկանում են եվրոպեոիդ մեծ ռասային։ Երբեմն հեղինակները դասակարգում են նրա հարավային ճյուղի մարդաբանական տիպերի սահմաններում՝ չտալով այն հարցի պատասխանը, թե ինչպես հյուսիսային եվրոպեոիդներին հատուկ երկարագլխությունը (դոլիխոկեֆալությունը) չափազանց ցայտուն արտահայտված է հայկական հնամարդաբանական նյութերում։ Անպատասխան է նաև ժամանակակից հայերին հատուկ հարթածոծրակության ու խիստ բրախիկեֆալության երևույթը, և այս տիպի ի հայտ գալու պահն ու պատճառը։ Միանգամայն ակնհայտ է, որ դիմային կմախքի կառուցվածքը՝ երկարադիմությունը, քթոսկրերի չափազանց պրոֆիլավորվածությունը, ժամանակի ընթացքում փոփոխություն չի կրել։

Միջին բրոզեդարյան գանգաբանական հավաքածուները առանձնանում են երեք ձևաբանական առաջատարներով (տանձաձև բացվածքի մեծ բարձրություն, քթոսկրերի չափազանց պրոֆիլավորվածություն ու գանգասակավառակի մեծ ծավալ), որոնք չունեն իրենց համաժամանակյա առաջավորասիական ու կովկասյան զուգահեռները և բավականին արխայիկ բնութագրեր են։ Էթնոժառանգաբանական համատեքստում միջին ու ուշբրոնզեդարյան

զանգաբանական հավաքածուների ձևաբանությունը այնքան էլ վստահելի սկզբնաղբյուր չհանդիսացավ հայերի էթնիկական պատմությունը շարադրելու համար:

Գրականության ցանկ

Ալեքսեև Վ., 1964, Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի բնակչության երկու խմբի մասին, Հայկական ՍՍՀ ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան, N 1, էջ 15-22:

Ավետիսյան Պ., Փիլիպոսյան Ա. 1996, «Ազգագրական հանդէսի» հրապարակումներն արդի հայ հնագիտության հիմնախնդիրների համատեքստում, «Ազգագրական հանդէսի» 100-ամյակը. նստաշրջանի թեզիսներ, Հայաստանի պատմության պետական թանգարան, Երևան, էջ 3-4:

Բուբուշյան Ռ. 1971, Սևանի ավազանի հնէամարդաբանական նյութերը, Երիտասարդ գիտնականների կոնֆերանսի նյութեր, ԵՊՀ հրատ, Երևան, էջ 232-236:

Լալայան Յ., 1931, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Մելքոնյան ֆոնդի հրատ., Երևան, 239 էջ:

Абдушелишвили М., 1982, Антропология населения Кавказа в бронзовом периоде // Материалы к антропологии Кавказа. Тбилиси: Мецниереба, Вып. VIII. 134 стр. (На груз. яз.).

Азизян Г. 1965, Палеоантропологический материал из погребения у селения Лчашен, «Պատմաբանասիական հանդես», Երևան, N 3, стр. 306-316.

Алексеев В., Гохман И., 1984, Антропология Азиатской части СССР, «Наука» Москва, 207 стр.

Алексеев В., Происхождение народов Кавказа, «Наука», Москва, 1974, 317 стр.

Алексеева Т., Эренбург Р., 1979, Каталог краниологических и остеологических коллекций института и музея антропологии МГУ (1865-1977), Издательство Московского университета, Москва, 198 стр.

Бубушян Р., 1973, Материальная культура и физический тип населения Армении в эпоху бронзы, Автореферат кандидатской диссертации, Ереван, 32 С.

Бунак В.,1929, Черепа железного века из Севанского района Армении, Русский Антропологический журнал, том 17, выпуск 3-4, стр. 64-87.

Мкртчян Р., 2001, Палеонатропология Оромского могильника, Материалы по антропологии Армении, Выпуск I, «Зангак-97», Ереван, 120 С.

Натишвили А., Абдушелишвили М., 1956, Материалы антропологической экспедиции 1954 г. Института эксперим. морфологии АН ГССР, Тез. докл. на 7-й сес. Института эксперим. Морфологии, Тбилиси, стр. 24-26.